ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 201-Ա 11 ապրիլի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵԿԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2025-2026 թվականների մեկամյա զարգացման ծրագիրը:

ՎԱՀԱՆ ՀԱՐՈՅԱՆ

Подписано: ZAROYAN VAHAN 3103860463

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Վ. ՀԱՐՈՅԱՆ
ք.Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

<<ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ԱԱՊԿ>> ՊՈԱԿ

գ.Ծովագյուղ փ.16 տ.4էլ.փոստ՝covagyuxi.aapk@mail.ru

ՀՀ Գեղարքունիքի մարզպետին փոխարինող

Վ. Զարոյանին

<<10>> 04. 2025թ.

Հարգելի՛ պարոն Վ. Զարոյան, Ծովագյուղի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ը Ձեզ է ներկայացնում 2025-2026 թվականների զարգացման և բարեփոխման հայեցակարգը :

Տնօրենի ժ/պ՝ Digitally signed by MINASYAN KAREN 1708750045 Date: 2025.04.10 12:03:58 AMT

Կ. Մինասյան

Հաստատում եմ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետին փոխարինող

Վ. Զարոյան _____

<<11>>_____2025թ.

<<ԾՈՎԱԳՅՈՒՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2025-2026 թվականների

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Ծրագիրը կազմող՝
<<Ծովագյուղի ԱԱՊԿ>>

պետական ոչ առևտրային
կազմակերպության

տնօրեն Կարեն Մինասյան

2025 թ.

<<Ծովագյուղի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում: Զբաղեցնում է Ծովագյուղի բնակավայրում՝ առանձին շենքում սեփականության հիմունքներով: ՊՈԱԿ-ն ունի մշտական ջրամատակարարում, էներգոմատակարարում և անհատական կոյուղի: Շենքային պայմանները բարվոք վիճակում են, պատուհանները փոխարինվել են նորով, շենքը կապիտալ վերանորոգվել է 2008 թվականին:

2008 թվականին շենքը գազաֆիկացվել է և տեղադրվել է ջեռուցման համակարգ: <<Ծովագյուղի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ը սպասարկում է երկու բնակավայրի շուրջ 3587 բնակիչ: Իր ենթակայության ներքո ունի մեկ ԲՄԿ՝ Սեմյոնովկայի ԲՄԿ, որը գտնվում է Սեմյոնովկա բնակավայրում և սպասարկում է մոտ 255 բնակիչ: Բնակավայրերի հետ համագործակցության արդյունքում Սեմյոնովկայի ԲՄԿ-ն տեղակայված է կուլտուրայի տան սենյակներից մեկում և բոլոր կոմունալ ծախսերը կատարվում են համայնքապետարանի կողմից:

Սեմյոնովկայի ԲՄԿ-ի սենյակը 2023 թվականին վերանորոգվել է, բայց ունի ջեռուցման խնդիր, որը կատարվում է էլեկտրոէներգիայով:

Բնակավայրի բնակչությանը պատշաճ բժշկական օգնություն ցուցաբերելու համար կատարվում է ԲՄԿ այցերը՝ ամսվա կտրվածքով: ՈՒստի իրատեսական է, որ բնակավայրերի համագործակցության արդյունքում գործող ներհամայնքային հասարակական տրանսպորտը շահագործվի ավելի երկար, որի շնորհիվ կապահովվի բնակավայրից բնակչության ֆիզիկական հասանելիությունը ՊՈԱԿ-ին: ՊՈԱԿ-ը կադրերով հագեցած է, ունեն վերապատրաստումներ, անհատական շարունակական տարբեր բժշկական ծրագրերի մասնակցություններ:

2025-2026 թվականների զարգացման և բարեփոխման ծրագրերի շրջանակներում նախատեսվում է՝

1.Առողջության առաջնային պահպանման ծառայությունների գծով բժշկական օգնության և սպասարկման իրականացման սկզբունքի պահպանումը:

2. Առողջության առաջնային պահպանման օղակում դերի բարձրացման ուղղված միջոցառումների ապահովումը:

3. Առողջության առաջնային պահպանման օղակում ծառայության կանխարգելիչ ուղղվածության ամրապնդումն ու ուժեղացումը:

4. Իրականացվող բժշկական օգնության և մատուցվող ծառայությունների որակի բարելավումը:

5. Առողջության առաջնային պահպանման օղակում ծառայության նյութատեխնիկական բազայի ամրապնդումը և այդ ամենի արդյունքում՝ հիվանդանոցային բուժօգնության բեռի թեթևացումը:

6. Առողջության առաջնային պահպանման օղակում մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով ըստ կատարված

աշխատանքների արդյունքների գնահատման խրախուսական ֆինանսավորման մեխանիզմների կիրառման ընդլայնումը:

7.Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների վաղ հայտնաբերման, բուժման և վերականգնողական միջոցառումները:

8.Բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, հիվանդների բուժման և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովումն, անհրաժեշտության դեպքում հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը ընտանեկան բժիշկների կողմից ողջ բնակչության համար, առանց հաճախումների սահմանափակման:

9. Առողջ ապրելակերպի քարոզչության և կանխարգելման ծրագրերի իրականացումը առողջության առաջնային պահպանման մասնագետների՝ ընտանեկան բժիշկների կողմից ամբողջ բնակչության համար:

10.Շաքարային դիաբետի վաղ հայտնաբերումն ու կանխարգելումը ռիսկի խմբում ընդգրկված բոլոր անձանց համար:

11. Սրտանոթային հիվանդությունների վաղ հայտնաբերումն ու կանխարգելումը ռիսկի խմբում ընդգրկված բոլոր անձանց համար:

Դեղերով ապահովման գծով (արդյունավետություն, անվտանգություն, որակ) տեղամասային թերապևտների, ընտանեկան բժիշկների միջոցով բնակչության անվճար և արտոնյալ պայմաններով դեղերով ապահովումը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգի:
Սույն զարգացման ծրագրի շրջանակներում առաջիկա տարում հնարավոր ռիսկերն են՝

1 .Արտագաղթը :
2.Բուժ սպասարկման ծավալների ոչբավարար իրագործում :
ՈՒստի հնարավոր ռիսկերի մեղմացման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները:

1. Ազգաբնակչության բուժսպասարկման որակի բարելավում,որը իր մեջ ներառում է բուժ անձնակազմի պարբերաբար վերապատրաստումները:
2. Նորագույն սարքավորումների ձեռքբերում և տեխնոլոգիաների ներդնում:

Բնակչությանը պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար անհրաժեշտ են նաև բժշկական սարքավորումներ, ընտանեկան բժշկի գործառույթները իրականացնելու համար: Սարքավորումներ տրամադրվել է համաշխարային բանկի կողմից, որոշ չափով ձեռք է բերվել կազմակերպության կողմից, որոշ օժանդակություն տրամադրվել է Վոլտ-Վիժեն կազմակերպությունը: Բացի վերը նշվածից բնակչությանը պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու համար կարևոր է ունենալ բարձր որակավորում ունեցող բժշկական անձնակազմ:

Առաջիկա տարիներին ևս սահմանված ընթացակարգով կապահովվի բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները: Գնահատման հիման վրա կկազմակերպվեն բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործումը վերապատրաստումների, ինչպես նաև մարզում կազմակերպվող տարբեր առողջապահական դասընթացներին մասնակցելու միջոցով :

Կարևոր է համագործակցությունը առաջատար աշխատանքայի փորձ ունեցող առողջության առաջնային պահպանման կենտրոնների հետ փորձի փոխանակման նպատակով:

Հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով ապահովել սկրինինգային ծրագրերի լիարժեք կատարումը՝ ընդգրկելով բնակչության նախատեսված տարիքային մեծամասնությանը: Հիվանդությունների կանխարգելման նպատակով բարձրացնել իմունիզացման ժամանակին ընդգրկվածության մակարդակը: Բացատրական աշխատանքներ տանել պատվաստումներից հրաժարվող բնակչության շրջանում՝ նվազագույնի հասցնելով նրանց թիվը: Իրազեկել բնակչությանը առողջ ապրելակերպի գործառույթներին, զերծ մնալ վնասակար սովորույթներից, իրազեկել առողջապահական բարեփոխումների մասին: Արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման նպատակով ապահովել 13-14 տարեկան կանանց պատվաստումը ՄՊՎ պատվաստանյութով: Բնակչության շրջանում հաշմանդամության նվազեցման նպատակով հաշմանդամության բերող հիվանդությունները ժամանակին կանխարգելել և բուժել:

Գործընթացը ավելի թափանցիկ դարձնելու և բնակչությանը իրազեկելու համար նախտեսվում է ՊՈԱԿ-ի անունից ստեղծել սոցիալական կայք էջ:

Անուն Ազգանուն Կարեն Մինասյան

Հասցե Գեղարքունիքի մարզ

գ.Ծ ովագյուղ փ.16,տ.4

Հեռախոս 098331334

10.04.2025թ.